

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն»
հիմնադրամի 2015 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն»

1.1. Գրանցման համարը՝ 03Ա197002	1.2. Գրանցման ամսաթիվը՝ 26.09.2011թ.		
1.3 Գտնվելու վայրը՝ 0069, ք. Երևան, Ուլնեցու 68	1.5. Հեռ. (060) 507-400	1.6. Կայք՝ www.ePension.am	1.7. Էլ.փոստ ePension@ePension.am
1.4. Հեռ. (060) 50 74 00			

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Պերճուհի Պետրոսյան - աշխատավարձ, օգնություն չի ստացել

Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հաշվետու ժամանակաշրջանում չեն օգտվել հիմնադրամի միջոցներից և ծառայություններից:

- 3.1 **Արտեմ Ասատրյան** - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (խորհրդի նախագահ),
- 3.2 **Կարինե Մինասյան** - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ (**նախկին**),
- 3.3 **Վախթանգ Միրումյան** - ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ (**նախկին**),
- 3.4 **Ներսես Երիցյան** - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ,
- 3.5 **Վարդան Արամյան** - ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ,
- 3.6 **Արամ Օրբելյան** - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (**նախկին**),
- 3.7 **Աստղիկ Միրզախանյան** - ՀՀ Կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ,
- 3.8 **Կարեն Թամազյան** - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար (**նախկին**),
- 3.9 **Սմբատ Սախյան** - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալ:

Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)

4. Աշխատակազմը՝ 8 աշխատակից, աշխատավարձ՝ 10.576.720 ՀՀ դրամ, օգնություն չեն ստացել

- 4.1 **Կորյուն Սարգսյան** - Գործադիր տնօրեն,
- 4.2 **Մարիամ Մուրադյան** - Գլխավոր հաշվապահ,
- 4.3 **Պերճուհի Պետրոսյան** - Հաղորդակցության և տեղեկատվության կառավարման գծով տնօրեն,
- 4.4 **Անի Երիցյան** - Հասարակայնության հետ կապերի պատասխանատու,
- 4.5 **Մարինե Մեհրաբյան** - Գործավար-օգնական,
- 4.6 **Արմեն Գևորգյան** - Վարորդ-լոջիստիկ,
- 4.7 **Գայանե Պարոնյան** - Թեժ Գծի Օպերատոր,
- 4.8 **Կարինե Սիմոնյան** - Թեժ Գծի Օպերատոր:

Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)

5. Իրականացված ծրագրերը՝ Հիմնադրամը համագործակցել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության, Համաշխարհային Բանկի, ԱՄՆ ՄԶԳ «Ֆինանսներ տնտեսական զարգացման համար» ծրագրի, ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի և այն իրականացնող կազմակերպության՝ Քեմոնիքս Ինթերնեշնլ Ընկերության Հայաստանյան Ներկայացուցչության հետ՝ մշակելով և իրականացնելով հանրային իրազեկման ծրագրեր կենսաթոշակային բարեփոխումների և բազմաստիճան կենսաթոշակային համակարգի, ինչպես նաև Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող այլ բարեփոխումների ու ընթացիկ ծրագրերի վերաբերյալ:

Իրականացված ծրագրերը և միջոցառումները միտված են եղել բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը և ընդհանուր իրազեկվածության մակարդակի աճին՝ ընդգրկելով այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են. կենսաթոշակային նոր համակարգի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների կազմակերպում հանրապետության բոլոր մարզերում տարբեր թիրախային խմբերի համար (գործատուներ և հաշվապահներ, մասնավոր և պետական հատվածներում աշխատող՝ կուտակային բաղադրիչի մասնակիցներ, 40-ից բարձր տարիքի աշխատող քաղաքացիներ), դասընթաց-քննարկումներ լրատվամիջոցների համար, հեռուստահաղորդումների և իրազեկման հոլովակների պատրաստում և հեռարձակում ռադիո և հեռուստաալիքներով, դասախոսությունների, սեմինարների, մարզային հանդիպումների կազմակերպում, հոդվածների, մամուլի հաղորդագրությունների պատրաստում և հրապարակում, տեղեկատվական և ուսումնական գրքույկների, պաստառների և այլ նյութերի մշակում և հրապարակում, 114 թեժ գծի վարում և կատարելագործում, www.epension.am սոցիալական պորտալի վարում և պորտալում նոր էլեկտրոնային ենթակառուցվածքների հիմնում ու շահագործում, համաժողովների, հանրային միջոցառումների կազմակերպում և անցկացում, թվային եղանակների կիրառմամբ տեղեկատվության տարածում թիրախային լսարանի շրջանում, քաղաքացիներին և կազմակերպություններին նույնականացման քարտ կարդացող սարքերի տրամադրում և համապատասխան խորհրդատվության տրամադրում, շարունակական կապի ապահովում տեղեկատվության ստացման նպատակով հիմնադրամ դիմած քաղաքացիների հետ և այլն: Ծախսված գումարի չափը կազմել է **27,697,587** ՀՀ դրամ:

Ծրագրի անվանումը, ծախսված գումարը

6. Ֆինանսական աղբյուրները՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության դրամաշնորհ «Աջակցություն կենսաթոշակային իրազեկման եվ ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին»: Դրամաշնորհը տրամադրված է ծրագրերի և հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման նպատակով: Ֆինանսավորման չափը կազմել է 19 277 900 ՀՀԴ :

Անունը (անվանումը), ծրագրի անվանումը, չափը

	ՀՀ Դրամ
7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝	27,697,587
7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը չափը՝	27,697,587

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի անուն ազգանունը **Չի իրականացվել**
(անվանումը):

9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը (թերթերի քանակը) թերթից

10. Հիմնադրամի գործադիր տնօրենի ժ/պ

10.1 Պերճուհի Պետրոսյան

11. Գլխավոր հաշվապահ

11.1